ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/35» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 23 մայիսի 2024թ.

Ժամը 10:00

Մասնակցում էին՝

Նախագահ՝ Գևորգ Հովհաննիսյան

Անդամներ՝ Արման Պողոսյան, Տիրան Խաչատրյան

Քարտուղար՝ Նելլի Աբովյան

1. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/35» ծածկագրով գնման ընթացակարգի դիմում-հայտարարության շտկման մասին

1.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/35» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի NN 1,2,3,4 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած «Simson»-ի հայտում առկա անհամապատասխանությունների շտկման նպատակով՝ 21.05.2024թ.-ին կայացած հայտերի բացման նիստում հանձնաժողովը որոշում էր կայացրել, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 N 526-Ն որոշման 41-րդ կետը, 1 աշխատանքային օրով կասեցնել գնման ընթացակարգը և «Simson»-ին տալ շտկման հնարավորություն՝ NN 1,2,3,4 չափաբաժինների մասով:

2. «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/35» ծածկագրով գնման ընթացակարգի դիմում-հայտարարության շտկման գնահատման մասին.

2.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/35» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 21.05.2024թ.-ի գնահատող հանձնաժողովի նիստի ժամանակ, որոշում էր կայացրել մեկ աշխատանքային օրով կասեցնել գնման ընթացակարգը, քանի որ «Simson»-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարության մեջ բացակայում էր հրավերի 4.3 կետի 1-ին մասի ե/ ենթակետով սահմանված հավելված 1.2-ը՝ իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, դիմում հայտարարությունը լրացված էր անհամապատասխանություններով և ստորագրված չէր մասնակցի կողմից, մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում բացակայում էին ապրանքային նշանի և արտադրողի անվանման տվյալները, իսկ տեխնիկական բնութագիրը ուղղակիորեն պատճենված էր հրավերի տեխնիկական բնութագրից և հստակ չէր արտացոլում մասնակցի կողմից առաջարկված ապրանքների իրական պարամետրերը:

2.2 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/35» ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի դիմում-հայտարարությունների շտկման համար նախատեսված ժամանակահատվածի ավարտից հետո, գնահատող հանձնաժողովը, գնահատեց «Simson»-ի կողմից ներկայացված հայտը, որի արդյունքում պարզվեց, որ վերոնշյալ ոչ մի շտկում իրականացված չէ, ուստի կարող ենք արձանագրել, որ «Simson»-ի կողմից, դիմում-հայտարարության շտկման համար նախատեսված ժամանակահատվածի ընթացքում շտկումը չի իրականացվել:

2.3 Հաշվի առնելով վերոգրյալը՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/35» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց՝

ա/ «Simson»-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և հայտը մերժել, քանի որ վերջինս չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին,

բ/ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/35» ծածկագրով գնման ընթացակարգի NN 1-4 չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

գ/ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/35» ծածկագրով գնման ընթացակարգին մասնակից «Simson»-ը հանդիսանում է ոչ ռեզիդենտ, ուստի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց չի իրականացվում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ **Գ. Հովհաննիսյան**

Քարտուղար՝ _____ **Ն. Աբովյան**

Անդամներ՝ _____ **Ա. Պողոսյան**

_____ **Տ. Խաչատրյան**